

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

**Հոդված 1.** <<Ազգային անվտանգության մարմինների մասին>> Հայաստանի  
Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի  
(այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի՝

- 1) 1-ին մասից <<Հայաստանի Հանրապետության Նախագահը,>> բառերը  
հանել,
- 2) 2-րդ մասում <<Նախագահը>> բառը փոխարինել <<վարչապետը>>  
բառով:

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 1) <<ա>> կետում <<Հայաստանի Հանրապետության Նախագահին և  
Հայաստանի Հանրապետության կառավարություն ու նրանց>> բառերը  
փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարություն և  
Հայաստանի Հանրապետության վարչապետին, ինչպես նաև վերջինիս>>  
բառերով,
- 2) <<ԺԷ>> կետում <<Նախագահին>> բառը փոխարինել <<Նախագահին,  
վարչապետին>> բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում <<Հայաստանի Հանրա-  
պետության Նախագահը և Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության  
կառավարությունն ու վարչապետը>> բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: